ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/24 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«05» նոյեմբերի 2024թ.,**
ժամը՝ 10:00

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի
տեղակալ
Վահե Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
նյութատեխնիկական ապահովման բաժնի պետ՝ Արման Ճռիկյան
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
վարչատնտեսական բաժնի ավագ մասնագետ՝ Արթուր Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների
կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

Քանի որ հանձնաժողովի նախագահը չի կարող մասնակցել նիստին, ուստի նիստը նախագահում է ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետը:

1. ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/24 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ

1.1 «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով իրականացվող գնման գործընթացի հայտերի բացման նիստը կասեցվել և ծանուցվել էր «Գարանտ 24» ՍՊԸ-ին, «Կարինե Ղազարյան Սերյոժայի» ԱՁ-ին և «Մերկադո» ՍՊԸ-ին անհամապատասխանությունների շտկման նպատակով:

1.2 Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են փաստաթղթեր.

- «Կարինե Ղազարյան Սերյոժայի» ԱՁ-ի և «Մերկադո» ՍՊԸ-ի կողմից շտկված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին.
- «Գարանտ 24» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը շտկվել են մասամբ.
  Չի ներկայացվել առաջարկվող ապրանքների ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը, ինչպես նաև չի շտկվել դիմում հայտարարությունը և իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը չի ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ - 0

2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

2.1 Մասնակիցների գնային առաջարկները և զբաղեցրած տեղերը հետևյալն են.

Չ/Բ համար	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Գնման գին	Վերջին առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին
1	-	«Գարանտ 24» ՍՊԸ	3000000	2400000	20%	2880000
	-	«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ		2450000	20%	2940000
2	-	«Գարանտ 24» ՍՊԸ	840000	673000	20%	807600
	-	«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ		680000	20%	816000
3	1	«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ	1600000	1200000	20%	1440000
	2	«Գարանտ 24» ՍՊԸ		1250000	20%	1500000
4	1	«Կարինե Ղազարյան Սերյոժայի» ԱՁ	260000	241509	0%	241509
	-	«Գարանտ 24» ՍՊԸ		244099	20%	292918.8
	3	«Լուսիկ Խաչատրյան Նիկալայի» ԱՁ		260000	0%	260000
5	1	«Մերկադո» ՍՊԸ	1072000	715000	20%	858000
	2	«Գարանտ 24» ՍՊԸ		750000	20%	900000

6	1	«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ	700000	538000	20%	645600
	2	«Գարանտ 24» ՍՊԸ		544000	20%	652800
	3	«Լուսիկ Խաչատրյան Նիկալայի» ԱՁ		700000	0%	700000

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0

3. «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց

3.1 «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/24» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգում

- 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Գարանտ 24» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետը:
- 3-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ին
- 4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Կարինե Ղազարյան Սերյոժայի» ԱՁ-ին
- 5-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Մերկադո» ՍՊԸ–ին

3.2 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը
3.3 Հաստատել 3-6-րդ չափաբաժինների մասով պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել,
3.4 Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝
Առաջարկել պատվիրատուի ղեկավարին «Գարանտ 24» ՍՊԸ–ի նկատմամբ նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ընթացակարգ:
3.5 Հաստատել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը և հրապարակել
3.6 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր:
3.7 Պայմանագրեր կնքելու առաջարկներ ներկայացնել ընտրված մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Հանձնաժողովի Նախագահ՝ Արման Ճռիկյան

Անդամներ՝

Արթուր Խաչատրյան

Քարտուղար՝ Սոնա Շիրինյան